

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 50 ՏԱՐՈՒՄ

Վ. Ա. ՔՈՍՏԱՆ

Բաժնետիրական գիտությունների դպրոց

Սովետական կարգերի հաստատմամբ հայ ժողովուրդը հնարավորություն ստացավ դարգացնելու ոչ միայն տնտեսությունը, այլև իր հոգևոր մշակույթն ու գիտությունը։ Նրկար դարերից ի վեր առաջին անգամ Հայաստանը դարձավ մշակութային և գիտական կյանքի բուռն վերելքի կենտրոն, աշխարհի դանա-վան կողմերում ցրված հայրենաբաղձ մտավորականների և մշակութային դործիչների հանգրվան։ Առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունում, 1920 թ. տեղեկված համալսարանում, աճեցին և շուտով նրանից ան-ջատվեցին հանրապետության մի շարք բուհեր, իսկ 1943 թ., Հայրենական պատերազմի ահեղ օրերին, ստեղծվեց գիտությունների ակադեմիան, որոնք և դարձան հայագիտության դարբնոցներ։ Այսօր վստահորեն կարելի է ասել, որ Սովետական Հայաստանն է հայագիտության հիմնական օջախը։

Սովետական կարգերի հաղթանակից հետո հայ լեզվաբանները լծվեցին հայագիտության դարգացման երախտավոր աշխատանքին։ Հատկապես պետք է նշել մեծ հայագետներ Մ. Աբեղյանի, Հ. Աճառյանի, Ստ. Մալխասյանցի, Գ. Ղափանցյանի անգնահատելի վաստակը։ Այս երախտավորները թեև անցյալում ևս գրել էին թափական ուշագրավ հետազոտություններ, սակայն ստեղծագոր-ծական բուռն ծաղկում ապրեցին և իրենց արժեքավոր գործերն ստեղծեցին Սովետական Հայաստանում։ Սովետական շրջանում Մ. Աբեղյանը հրատարա-կեց իր «Հայոց լեզվի տեսությունը», «Տաղաչափությունը», «Հայ ժողովրդա-կան խաղիկները», ապա ձեռնամուխ եղավ հայ գրականության պատմության բազմահատոր աշխատության հրատարակմանը։

Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը», «Անձնանունների բառարանը», «Լիակատար քերականություն հայոց լեզվի», բարբառագիտա-կան բազմաթիվ ուսումնասիրություններ գրվել են Սովետական Հայաստանում։ Ստ. Մալխասյանցը հայերենի բացատրական բառարան կազմելուն ձեռնա-մուխ էր եղել դեռևս անցյալ դարի վերջին, սակայն շուրջ 30 տարվա նրա աշ-խատանքը չէր տվել ցանկալի արդյունք։ Սովետական Հայաստանի կառավարու-թյունը նրա համար տեղեկեց պայմաններ, և Հայրենական պատերազմի օրե-րին լույս տեսավ երախտավոր հայագետի հակաթափալ բառարանը։ Գ. Ղա-փանցյանի հայագիտական և ընդհանուր լեզվաբանական աշխատությունները հրապարակվեցին միայն 1930-ական թվականներին։

Մինչև 1950-ական թվականներն աստեղծված աշխատությունները վերա-բերում են կամ հայագիտության ավանդական թնագավառներին, որտեղ գոր-ծում էին անցյալի մեծ երախտավորները (Աճառյան, Մալխասյանց) և կամ ձեռք էին բերվել հակառակ լեզվի նոր ուսմունքի կողմնակիցների հարուցած արգելք-ների (Աբեղյան, Ղափանցյան)։ Միայն 1950 թ. հետո հայ լեզվաբանությունը

դուրս եկավ ստեղծագործական լայն ճանապարհ, երբ ստեղծվեցին գիտական մտքի անկաշկանդ զարգացման ֆուլոր պայմանները:

Որոհներ են սովետաճայ լեզվաբանության նվաճումները: Ամենից առաջ պետք է նշել, որ սովետաճայ լեզվաբանությունը, ի տարբերություն անցյալի լեզվաբանության, որը գերազանցապես բանասիրական-բնագրագիտական բնույթ ուներ, ընթացքով տեսական հարցերի առաջարկման և լուծման ճանապարհով:

Արժեքավոր են Գ. Ղափանցյանի ոստումնասիրությունները լեզվաբանության տեսության բնագավառում: «Ընդհանուր լեզվաբանություն» (1939) աշխատությունը նա առաջինը հայ իրականության մեջ զբաղվեց ձևույթի, հընչույթի տեսությամբ, տարբերակելով լեզվական ձևն ու ձևույթը: Նա հընչույթը, իբրև լեզվաբան-սոցիալական միավոր, տարբերակում էր հընչունից, իբրև ֆիզիկո-ֆիզիոլոգիական միավորից: Գ. Ղափանցյանից հետո հընչույթի և ձևույթի տեսությունները զարգացրին Գ. Սևակը, ապա՝ Էդ. Աղայանը և Գ. Զատուկյանը:

Գ. Ղափանցյանի նշված աշխատությունից հետո սովետաճայ լեզվաբանության մեջ ավանդույթ դարձավ ընդհանուր լեզվաբանությունը: Սկսած 1947 թ. մի քանի անգամ վերահրատարակվել է Էդ. Աղայանի «Լեզվաբանության ներածությունը». որը լեզվաբանական-տեսական հարցերի առաջարկմամբ և լուծմամբ լավագույն ձևերակներին մեկն է (թարգմանված է ռուսերեն):

Լեզվաբանական տեսական հարցերի ուղղությամբ ձեռք բերված նվաճումներից մեկն է խոսքի մասերի ուսմունքի մշակումը, որը կատարված է Մ. Արեղյանի, Ա. Ղարիբյանի, Գ. Սևակի և Ս. Աբրահամյանի անվան հետ: Մ. Աբրեղյանի քերականական համակարգում խոսքի մասերը և նախադասության անդամները միահյուսված էին ներկայացվում: 1930-ական թվականներից գործածության մեջ մտած Շչերբայի և Բարխուդարովի դասագրքի շնորհիվ դրանք հասակորեն զատվեցին նախադասության անդամներից: Սովետաճայ լեզվաբանության մեջ առաջինը Գ. Սևակը մշակեց խոսքի մասերի ուսմունքը («Խոսքի մասերի ուսմունքը, ներածություն», Պետհամալսարանի «Գիտ. աշխատություններ», հ. 11, 1939): Խոսքի մասերը նա տարբերակեց նախադասության անդամներից՝ առաջինները լեզվի, երկրորդները խոսքի միավոր դիտելով: Հետագայում խոսքի մասերի դասակարգման սկզբունքների հստակմամբ հանդես եկավ պրոֆ. Ս. Աբրահամյանը՝ ցույց տալով, որ խոսքի մասերի դասակարգումը կատարվում է մեկ միասնական հիմունքով, սակայն աստիճանական դասակարգումով, որը հենվում է խոսքի մասերի ներքին փոխհարաբերության հաշվառման վրա («Զթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում», 1965): Այս աշխատության մեջ հանգամանորեն քննության են առնված առհասարակ ժամանակակից հայերենի շթեքվող խոսքի մասերը (մակբայ, կապ, շաղկապ, ձայնարկություն, հղանակավորող բառեր)՝ իրենց քերականական, բառային հատկանիշներով, շարահյուսական կիրառության առանձնահատկություններով:

Լեզվաբանական տեսական մտքի հաջողություններին է արդի կառուցվածքային մեթոդների ներդրումը հայագիտության մեջ: Վերջին տասնամյակում երևան են եկել մի շարք աշխատություններ, որոնցում մի կողմից զարգացվել են ադր մեթոդները, ինչպես է. Աթայանի «Проблемы и методы

структурального синтаксиса» (1962), «Понятие элементарной синтаксической структуры» (1964), է. Ավետյանի «Природа лингвистического знака» (1968), Ռ. Ավետյանի «Լեզվական նշանի իմացաբանական մի քանի հարցեր» (1972) աշխատությունները, մյուս կողմից, դրանցով կատարվել են հայերենի նոր ուսումնասիրությունները: Էդ. Աղայանի «Գրաբարի քերականություն» (հ. I, գիրք I, 1964), «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» (1967) աշխատությունները գրված են վառուցվածքային մեթոդների վերաբերյալ, որոնք հնարավորություն են տվել բացահայտելու գրաբարի և արդի հայերենի շատ իրողություններ: Գ. Զահուկյանի «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» (1969) ուսումնասիրությունը ավանդական և վառուցվածքային քերականությունների կարևոր նվաճումների օգտագործմամբ տալիս է հայոց լեզվի ամբողջ համակարգի պատկերը: Հեղինակը նոր ըմբռնումներով վերլուծելով լեզվական փոփոխությունները, հանգում է օրիգինալ եզրակացությունների՝ հայ քերականագիտության մեջ ներմուծելով մեծ թվով նոր հասկացություններ:

Ձևաբանության և շարահյուսության հստակ սահմանազատումով ուղի հարթվեց քերականության այդ երկու բաժինների փոքր ու բազմակողմանի ուսումնասիրության համար: Արդի հայերենի (մասամբ և գրաբարի) քերականական կառուցվածքի բազմաթիվ կողմեր լավ են ուսումնասիրվել սովետահայ լեզվաբանության մեջ: Առանձին փոքրի մասեր արժանացել են մենագրական ուսումնասիրության: Այս կարգի հետազոտություններից են Ա. Աբրահամյանի «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» (1953), Ռայլը «Ժամանակակից հայերենում» (1962) աշխատությունները: Առաջինը հայերենի դերբայների բնութագրման, նրանց առաջացման, բարբառային տրանսկրիպցիաների, հետագա զարգացման բազմակողմանի գիտական քննությունն է, իսկ երկրորդը՝ բայի փոքրիմասային հատկանիշների համակողմանի ուսումնասիրություն: Նրկու աշխատություններում էլ Ա. Աբրահամյանը երևան է հանել այդ խոսքի մասերի էական գծերը, տվել դրանց գիտական բնութագիրը, բացահայտել նոր հատկանիշներ: Դրանց շնորհիվ գիտականորեն հիմնավորվեց մի նոր դերբայ՝ ընթացակցական ածականում, որը էդ. Աղայանը ընդդրոշում է իբրև մակբայական (մի նոր դերբայի՝ ժխտման դերբայի, գիտական ճանաչումը կապված է Ա. Դարվիթյանի աշխատանքի հետ): Ա. Աբրահամյանին է պատկանում բարի սերունդի առաջնախոր ուսումնասիրությունը, մասնավորապես վերլուծության երևույթի արժեքավորումը:

Առանձին ուսումնասիրություններ են նվիրված տարբեր փոքրի մասերին, ինչպես Հ. Բարսեղյանի «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» (1953), Ս. Աբրահամյանի «Արդի հայերենի դերանունները» (1956), Ա. Մարգարյանի «Արդի հայերենի կապերը» (1955), «Հայերենի հարադիր բայերը» (1966), Մ. Ասատրյանի «Բայի տեղը ժամանակակից հայերենում» (1959), «Ձևաբանության հարցեր» (1969), Հ. Պետրոսյանի «Գոյականի առումները հայերենում» (1960), Հ. Օհանյանի «Ածականը ժամանակակից հայերենում» (1962), Գ. Գարեգինյանի «Շահակապետը ժամանակակից հայերենում» (1963), Ս. Գյուլբուրդյանի «Թվական առումը ժամանակակից հայերենում» (1964) և այլ աշխատություններ: Ընդ որում նշենք, որ սովետահայ լեզվաբանությունը վերջին շրջանում եղանակավորող բառերը ճանաչեց և արժեքավորեց իբրև ինքնուրույն խոսքի մաս, որը նախկինում մակբայի մի տեսակն էր համար-

վում: Եղանակավորող բառերի քերականական հատկանիշների ճանաչումը, որը սկսել էր Մ. Աբեղյանը, կապվում է Ա. Աբրահամյանի, Ռ. Իշխանյանի, Ս. Աբրահամյանի, Ա. Քյուրքչյանի հետ: Մասնավորապես Ա. Աբրահամյանը կատարել է գրաբարի եղանակավորող բառերի դասդասումը, իսկ Ս. Աբրահամյանը հանգամանքորեն քննել է արդի հայերենի եղանակավորող բառերը, տվել դրանց գիտական ճշգրիտ նկարագրությունը:

Սովետահայ լեզվաբանության մեջ որոշակիորեն զարգացել է շարահյուսագիտությունը, որի հիմունքների մշակման գործում անգնահատելի ծառայություն է մատուցել Մ. Աբեղյանը: Ընդ տրու՝ հետազոտվել է ոչ միայն պարզ նախադասության, այլև անցյալում համեմատաբար քիչ ուսումնասիրված բարդ նախադասության կառուցվածքը: Այս ասպարեզում նշանք Վ. Առաքելյանի «Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները» (1957), «Հայերենի շարահյուսություն» երկհատոր ուսումնասիրությունը (հ. 1, 1958, հ. 2, 1964), Ն. Պառնասյանի «Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում» (1961), «Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում» («Լեզվի և ոճի հարցեր», 1, 1964), Ս. Աբրահամյանի «Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր» (1962), Ա. Պապոյանի «Կախյալ շարահարություններ բարդ նախադասությունները արդի հայերենում» (1968), Բ. Վերդյանի «Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն» (1970) աշխատությունները: Վ. Առաքելյանի «Երկհատոր աշխատության մեջ կատարված է պարզ և բարդ նախադասությունների մանրակրկիտ քննություն. բացահայտված են նախադասության անդամների շարահյուսական դրսևորումները, դիտված նրանց ձևավորման ամենաթափափաղան առանձնահատկությունները: Հայ քերականագիտության մեջ առաջինը Ս. Աբրահամյանն է տվել միակազմ և թերի նախադասությունների գիտական արժեքավորումը: Միակազմ նախադասությունների տարբեր տեսակներ քննված են Ս. Գյուլբուղդյանի «Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում» (1967), Հ. Հարությունյանի «Անդամ նախադասությունները ժամանակակից հայերենում» (1970) աշխատություններում: Վերջին տարիներին հայ շարահյուսագիտությունն սկսել է զբաղվել անցյալում որոշակի զարգացում ունեցած և նախադասության տրամաբանական ուսմունքի տիրապետության ժամանակ անտեսված բառակապակցությունների ուսմունքով: Թեև եղած արդյունքներն ամբողջապես չեն հրատարակված, բայց հայ քերականագիտությունն այս ասպարեզում ևս հտ չի մնում:

Հետաքրքրական աշխատանք է կատարվել շարահյուսական համանիշների ուսումնասիրության ուղղությամբ: 1970 թ. լույս տեսավ Ն. Պառնասյանի «Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում» գիրքը, որը նվիրված լինելով նախադասության անդամների արտահայտության համանիշների համակողմանի քննությանը՝ նոր խոսք է հայ շարահյուսագիտության մեջ:

Ոչ մեծ, բայց զգալի հաջողություններ են ձեռք բերվել ոճաբանության բնագավառում, որը երկար ժամանակ դուրս էր մնացել լեզվաբանական հետազոտությունների տեսադաշտից: Այս ուղղությամբ կատարված ուսումնասիրություններից աչքի են ընկնում Վ. Առաքելյանի «Ավ. Իսահակյանի բառապաշարի ոճաբանական առանձնահատկությունները» (1954), «Հայերենի պարբերություն» (1969), Պ. Պողոսյանի «Բայի եղանակային ձևերի ոճական կի-

րառությունները արդի հայերենում» (1959), Ռ. Իշխանյանի «Ա. Բակունցի լեզվական արվեստը» (1965), Մ. Ավագյանի «Ն. Զարյանի ստեղծագործության լեզուն և ոճը» (1961), Ս. Մելքոնյանի «Հ. Թումանյանի պոեզիայի լեզուն և ոճը» (1969) աշխատությունները: Նույնիսկ փորձ է արված ստեղծելու ոճաբանության ձեռնարկ (Գ. Վահանյան, «Ոճաբանության ձեռնարկ», 1956):

Լուրջ նվաճումներ ունենք բառագիտության բնագավառում: Հրապարակվել են տեսական բնույթի բազմաթիվ ուսումնասիրություններ, ինչպես Ս. Ղազարյանի «Ժամանակակից հայերեն լեզուն և ուսանողների դերը նրա հարստացման ու զարգացման մեջ» (1955), Ա. Մուրվալյանի «Հայոց լեզվի բառային կազմը» (1955), «Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայականություն» (1959), Ս. Էլոյանի «Ածանցները ժամանակակից հայերենում» (1963), Ա. Սուքիասյանի «Հոմանիշները ժամանակակից հայերենում» (1971) և այլն:

Հնչյունաբանության բնագավառում ձեռք բերված հաջողությունները առաջին հերթին կապվում են Մ. Աբեղյանի անվան հետ, որի «Հայոց լեզվի տեսություն» աշխատությունն այս տեսակետից նորություն էր: Հայերենի հնչյունական համակարգի, հնչյունական փոփոխությունների օրինաչափությունների ուսումնասիրությանն է նվիրված Վ. Առաքելյանի «Հայերենի հնչյունաբանությունը» (1955) աշխատությունը: Մ. Աբեղյանից հետո հնչյունաբանության բնագավառում լուրջ նվաճում էր հնչյութաբանության ձևավորումը, որը Գ. Ղափանցյանի, Գ. Սևակի, Էդ. Աղայանի, Գ. Ջահուկյանի աշխատությունների շնորհիվ այժմ դարձել է հնչյութաբան լեզվաբանների հետազոտության հիմնական բնագավառը: Հրատարակվել են Ա. Արամյանի «Ժամանակակից հայերենի ձայնավորները» (1962), Ա. Խաչատրյանի և Վ. Հայրապետյանի «Հայերենի բաղաձայնների փորձառական ուսումնասիրություն» (1971) աշխատությունները:

Հայերենի կառուցվածքի բազմակողմանի այս ուսումնասիրությունները նախադրյալներ էին՝ ստեղծելու արդի հայերենի գիտական քերականություն, որն արդեն գրված է ՀՍՄՀ ԳԱ լեզվի ինստիտուտի կոլեկտիվի ջանքերով (դեռևս անտիպ):

Սովետահայ լեզվաբանության նվաճումներից մեկն էլ դպրոցական նոր դասագրքերի ստեղծումն ու կայունացումն է:

Սկսած 1934 թ. գործածության մեջ մտավ Ա. Ղարիբյանի «Հայոց լեզվի դասագիրքը», որը պարունակում է հնչյունաբանություն, բառագիտություն և ձևաբանություն բաժինները, իսկ 1936 թ.՝ Գ. Սևակի «Հայոց լեզվի շարահյուսությունը», որոնք վերամշակվելով 30 տարուց ավելի կայուն դասագիրք դարձան: 1965 թ. գործածության մեջ մտավ Էդ. Աղայանի և Հ. Բարսեղյանի «Հայոց լեզվի դասագիրքը»:

Ա. Ղարիբյանը հեղինակ է դպրոցական բազմաթիվ դասագրքերի և մեթոդական ձեռնարկների, որոնք նպաստում են հայոց լեզվի ուսուցման գործին:

Հրատարակվել են նաև ուսուցիչներին և սովորողներին օժանդակող մի շարք ձեռնարկներ, որոնցից արժեքավոր են Ս. Աբրահամյանի «Ժամանակակից հայերենի քերականություն» (1969), Պ. Պողոսյանի «Հայոց լեզուն» (օժանդակ ձեռնարկ բուհերն ընդունվողների համար) (1969) և այլն:

Որոշակի նվաճումներ են ձեռք բերվել գրաբարի դասագրքերի և ձեռնարկների ստեղծման ուղղությամբ: Եթե սովետական շրջանում, մինչև 1930-ական թվականները, գրաբարի ուսումնասիրությանը պատշաճ տեղ չէր հատկաց-

վում, ապա 30-ական թվականներից սկսած այդ առարկայի ուսուցումը բուհերում դառնում է սիստեմատիկ, և ստեղծվում են համապատասխան ձեռնարկներ: Առաջիններից մեկը Հ. Աճառյանի «Գրաբարի ուսուցիչ» ձեռնարկն է, որը կազմված է ավանդույթ նյութը ըստ դասերի մատուցելու եղանակով: Այնուհետև հրատարակվում են Ա. Առաքելյանի, Վ. Առաքելյանի ձեռնարկները: 1952 թ. լույս տեսավ Ա. Աբրահամյանի «Գրաբարի ձեռնարկը», որն այնուհետև վերահրատարակվեց երկու անգամ: Գիրքը գրաբարի քերականական կառուցվածքի, ռեական առանձնահատկությունների խոր ուսումնասիրություն է: Գրաբարի ուսուցմանն են նվիրված նաև Ս. Ղազարյանի «Գրաբարի դասագիրքը» (1952) և Պ. Շարաբխանյանի «Գրաբարի ուղեցույցը» (1967):

Սովետահայ լեզվաբանության բնագավառներից մեկն էլ արևմտահայերենի ուսումնասիրությունն է: Ընդ որում՝ հետազոտության նյութ են դարձել, մի կողմից, արևմտահայ գրական լեզվի ձևավորման ու զարգացման և, մյուս կողմից, բարբառների կառուցվածքի հարցերը: Հրատարակվել են Տ. Շահբազյանի «Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը» (1963), Վ. Աճեմյանի «Գրական արևմտահայերենի ձևավորումը» (1971) աշխատությունները: Սփյուռքահայ դպրոցների համար հրատարակված բազմաթիվ դասագրքերից մի բանիսը ևս նվիրված են արևմտահայերենի քերականությանը:

Հայ լեզվաբանության այնպիսի ավանդական բնագավառներում, ինչպիսիք են հայերենի պատմահամեմատական ուսումնասիրությունն ու հայոց լեզվի պատմությունը, ձեռք են բերվել զգալի հաջողություններ: Բավական է ասել, որ Հ. Աճառյանի ուսումնասիրությունների մեծ մասը լույս է տեսել սովետական տարիներին: Այս շարքի ամենամեծ աշխատությունը նրա «Հայերեն արմատական բառարանն» է, որի ապակետիպ հրատարակությունն իրագործվեց 1926—1935 թթ. (7-րդ հատորը տպագիր է): Այնուհետև նա հրատարակեց «Հայոց լեզվի պատմությունը» (առաջին հատորը՝ 1940 թ., երկրորդը՝ 1951 թ.), որը արմատական բառարանի տեսական եզրակացությունների ամփոփումն է, և այնտեղ հայոց լեզվի պատմությունը գերազանցապես քննվում է բառային կազմի ծագման, պատմական տեղաշարժերի ֆոնի վրա: Ծթե արմատական բառարանը պարունակում է հայերենի բոլոր արմատների ծագումնաբանական, իմաստային, բառակազմական քննությունը, ապա «Հայոց լեզվի պատմության» մեջ այդ քննությունը ներկայացված է ամփոփ, և նշված է բառային կազմի զարգացումը հայոց լեզվի պատմության տարբեր շրջաններում:

Հայոց լեզվի ծագման հարցում հետեւելով Հյուբշմանին, Հ. Աճառյանը պատմահամեմատական մեթոդի հետեւողական կիրառմամբ բացահայտել է մի քանի հարյուր արմատների ծագումը, տվել դրանց ստուգաբանությունը, ինչպես և բացահայտել դրանց դերը հայոց լեզվի բառային կազմում: Նրա առավել արժեքավոր «Լիակատար քերականություն հայոց լեզվի (համեմատություն 562 լեզուների)» աշխատությունը պարունակում է ոչ միայն հայերենի բառամթերքի ձևաբանական և շարահյուսական կառուցվածքի ամենամանրակրկիտ քննությունը, այլև գծում է աշխարհի զանազան լեզուների ծագմանաբանական և կառուցվածքային ընդհանրություններն ու տարբերությունները, տալիս լեզվական երևույթների խոր քննությունը: Այս ուսումնասիրությունը եզակի երևույթ է ոչ միայն հայ, այլև սովետական լեզվաբանության մեջ առհասարակ:

Հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության ասպարեզում խոշոր ներդրում ունի Գ. Ղափանցյանը, որի «Историко-лингвистическое значение топонимики древней Армении» (1940), «К происхождению армянского языка» (1947), «Хайаса — колыбель армян» (1947), «Общие элементы между хеттским и армяноким языками», «Суффиксы и суффиксированные слова в топонимике древней Малой Азии» (1948), «Հայոց լեզվի պատմություն (հին շրջան)» (1961) և այլ աշխատություններ նվիրված են հայերենի և հին փոքրասիական լեզուների առնչությունների բացահայտմանը: Թեև անընդունելի է Գ. Ղափանցյանի դրույթն այն մասին, թե հայերենը ներկայացնում է խառնվորված, երկրնույթ լեզու (հնդեվրոպական և հին փոքրասիական ոչ-հնդեվրոպական տիպի), սակայն անժխտելի է, որ Գ. Ղափանցյանը, ընթանալով շտրոկված ճանապարհով, երևան է հանել հայերենի և այդ լեզուների որոշ ընդհանրություններ:

Հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության ասպարեզում լուրջ նվաճումներ են ձեռք բերվել Գ. Զահուկյանի հետազոտությունների շնորհիվ:

«Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» (1959) աշխատության մեջ Գ. Զահուկյանը տվել է գրաբարի հոլովման համակարգի հնդեվրոպական գծերը: Այստեղ նա քննել է գրաբարի հոլովման հնատիպ երևույթները, հնդեվրոպական ձևաբանական տիպի փոփոխությունները հայերենում, հոլովների, հոլովումների, հոլովման միջոցների, հոլովման հիմքերի ծագումը: Այս աշխատությունն արժեքավոր է նաև նրանով, որ այնտեղ ամփոփված են հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության այս բնագավառին վերաբերող հետազոտությունների արդյունքները: Ուշագրավ է նաև Գ. Զահուկյանի «Հայոց լեզվի պերիոդիզացիայի հարցերը» (Պետ. համալսարանի գիտական աշխատություններ, 57, մաս 1-ին, 1956) հոդվածը, որտեղ նա առաջարկում է հայոց գրական լեզվի նոր շրջանաբաժանում՝ հին, միջին և նոր, ըստ որում՝ առաջինը բաժանում է դասական գրաբարի, ետդասական գրաբարի և նախամիջին ենթաշրջանների, միջին հայերենը՝ երկու ենթաշրջանի՝ կլիկյան նորմավորման և աշխարհաբարացման, նոր շրջանը՝ երեք ենթաշրջանների՝ վաղ աշխարհաբարի, երկնյուղ աշխարհաբարի և ժամանակակից հայերենի:

Ձի կարելի չնշել Գ. Զահուկյանի հետազոտությունները հայերենի և հին փոքրասիական հնդեվրոպական լեզուների վաղի ուսումնասիրության ուղղությամբ: Հրատարակվել են «Хайасский язык и его отношение к индоевропейским языкам» (1964), «Урартский и индоевропейские языки» (1964), «Очерки по истории дописьменного периода армянского языка» (1967), «Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները» (1970) աշխատությունները, որոնց մեջ հեղինակը քննել է հայերենի նախագրային շրջանի պատմության և համեմատական քերականության մի շարք կարևոր հարցեր: Պատմահամեմատական մեթոդի հետևողական կիրառմամբ Գ. Զահուկյանը ցույց է տվել, որ հայերենի հնդեվրոպական քառերն ունեն երկու շերտ. մեկը քոնի նախնականն է, իսկ մյուսը հին փոքրասիական լեզուների (հայասերենի, ուրարտերենի, խուռերենի և այլն) ազդեցության արդյունք: Հայերենի նախագրային պատմությունը նա ներկայացնում է մի քանի շրջանով. առաջին՝ 5—4-րդ հազարամյակներ մ. թ. ա., երբ հնդեվրոպական լեզուների մեջ հայերենն սկսում է ուրվագծվել, ձեռք բերել թարբառի արժեք. երկրորդ՝ նախահայերենյան շրջան՝

երրորդ հազարամյակից մինչև 12-րդ դ. մ. թ. ա., ևրբ հայկական ցեղերն առանձնանում են և շարժվում դեպի հարավ. երրորդ հնագույն շրջան՝ 12-րդ դ. մ. թ. ա. մինչև 5-րդ դ. մ. թ. ա., երբ հայկական ցեղերը փոյուզացիների հետ երևան են գալիս Փոքր Ասիայում և շարժվում արևելք, աստիճանաբար հիմնավորվում արատական Հայաստանի տեղիտորիայում: «Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները» աշխատության մեջ Գ. Զահուկյանը քննել է հայերենի և իլիրերենի, հին մակեդոներենի, թրակերենի, պելասգերենի, փոյուզերենի, խեթերենի, լուվերենի, հիերոգլիֆյան խեթերենի, լիկիերենի, լիդիերենի, կարիերենի բառային ընդհանրությունները: Ըստ որում՝ քննությունը տարվում է հայոց լեզվի պատմության բացահայտման ֆոնի վրա: Բառային ընդհանրությունները, մի կողմից, հայերենի և, մյուս կողմից, Բալկանյան թերակղզու ու Փոքր Ասիայի հնդեվրոպական հին լեզուների միջև վկայում են, որ դրանց մի մասը հայերենում ենթաշերտային բնույթ ունի, իսկ մյուսները փոխառություններ են:

Թ. Ղարաբուլյանի «Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը» (1961) աշխատությունն ամփոփում է հայերենի բայական համակարգի հնդեվրոպական գծերի ուսումնասիրության արդյունքները:

Հայոց լեզվի պատմության ստեղծման ուղղությամբ զգալի գործ է կատարել Ս. Ղաղարյանը: Նրա «Հայոց լեզվի համառոտ պատմություն» (1954) գիրքը, որը վերամշակվելով հետագայում հրատարակվեց «Հայոց գրական լեզվի պատմություն» անվանումով (1961), առաջին փորձն է ներկայացնելու հայերենի զարգացման պատմությունը բառային կազմի, բերականական կառուցվածքի փոփոխությունների հիման վրա: Ծթե Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմությունը» գերազանցապես բառային կազմի քննություն է, ապա Ս. Ղաղարյանի աշխատությունը պարունակում է լեզվի տարբեր կողմերի բացահայտումը: Ի դեպ, Ս. Ղաղարյանի «Միջին հայերենը», որի առաջին հատորը միայն լույս տեսավ, գալիս էր լրացնելու հայոց պատմության այս շրջանին վերաբերող ուսումնասիրությունների պակասը: Միջին հայերենի ուսումնասիրությանն է նվիրված նաև ՀՍՄՀ ԳԱ լեզվի ինստիտուտի «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» ժողովածուն, որի առաջին հատորը լույս է տեսել 1972 թ. (հաջորդը հանձնված է հրատարակության): Այստեղ բազմապիսի սկզբնաղբյուրների հիման վրա քննված են միջին հայերենի հնչյունաբանության, բառագիտության, ձևաբանության (բայ և շեքվող խոսքի մասեր) իրողությունները:

Նույն հարցին է անդրադարձել էգ. Աղայանը իր «Գրաբարի բերականությունը» (հ. 1-ին, գիրք 1, 1964) ուսումնասիրությամբ, որի մնացած 7 գրքերը դեռևս չեն հրատարակվել:

Հայոց լեզվի պատմական շարահյուսություն ստեղծելու առաջին փորձն է Հ. Կուսիկյանի «Очерки исторического синтаксиса литературного армянского языка» (Москва, 1959) գիրքը: Գրաբարի կառուցվածքի առանձին կողմեր քննվել են Պ. Շաբաբխանյանի «Գրաբարի շաղկապները» (1960), Ռ. Հովհաննիսյանի «Ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների կառուցվածքը» (1972) և այլ աշխատություններում: Գրաբարի համաժամանակյա ուսումնասիրությանն է նվիրված է. Թումանյանի «Древнеармянский язык» (Москва, 1971) գիրքը, որը ուսերեն լեզվով գրված լավագույն հետազոտությունն է:

Լայն թափ է ստացել գրական հայերենի ուսումնասիրությունը. երևան են եկել մի շարք մենագրություններ (հոգվածների թիվը շատ մեծ է), ինչպես Գ. Սևակի «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» (1948), «Հայոց լեզվի զարգացման սովետական փուլը» (1946), Ա. Մարգարյանի «Միջայել նալրանդյանի լեզվաբանական գործունեությունը» (1957), «Խաչատուր Աբովյանը և աշխարհաբարը» (1958), Խ. Սարգսյանի «Михаил Налбандян и вопросы языка» (1955), Ս. Գալստյանի «Ակնարկներ աշխարհաբարի պատմության» (1963) և այլն: Հրատարակման ընթացքի մեջ է ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի կոլեկտիվ ժողովածուն՝ «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում»:

Հ. Աճառյանի հիմնադրած բարբառագիտական դպրոցը ակնառու նվաճումների է հասել սովետական իշխանության տարիներին: 1939 թ. Ա. Ղարիբյանի ուսումնասիրության շնորհիվ բացահայտվեց հայ բարբառների Ս ճյուղը, իսկ հետագա աշխատանքների շնորհիվ նաև Կա, Հա և դրաբարակերպ ճյուղերը, որոնցից հետո կատարվեց վերադասակարգում: Նշած յոթ ճյուղերը դասակարգվեցին երեք ճյուղախմբերի. 1) դերբայավոր, որի մեջ մտնում են Ում, Ս, Լ ճյուղերը, 2) մասնիկավոր, որի մեջ մտնում են Կը, Կա, Հա ճյուղերը, 3) գրաբարակերպ, որը կազմված է մեկ ճյուղից:

Ա. Ղարիբյանը տվել է տասնյակից ավելի բարբառների գիտական առաջին նկարագրությունը և դրանց արդյունքները ներկայացրել մի շարք աշխատություններում՝ «Հայ բարբառների մի նոր ճյուղ» (1939), «Հայ բարբառների մի նոր խումբ» (1958) և այլն:

Ստեղծված են հայ բարբառագիտության բուհական ձեռնարկներ, որոնցից լավագույնը Ա. Ղարիբյանի «Հայ բարբառագիտություն» (1953) գիրքն է: 1957 թ. հրատարակվեց նաև Ա. Գրիգորյանի «Հայ բարբառագիտության դասընթացը»:

Մինչ այժմ հրատարակվել են գրեթե քուրբ բարբառների և մի շարք խոսվածքների գիտական նկարագրությունն ամփոփող ուսումնասիրություններ:

Դրանցից են Հ. Աճառյանի «Քննություն Ագուլիսի բարբառի» (1935), «Քննություն Առտիալի բարբառի» (1959), «Քննություն Մարաղայի բարբառի» (1926), «Քննություն Համշենի բարբառի» (1947), «Քննություն Նոր-Նախիչեվանի (Խրիմի) բարբառի» (1925), «Քննություն պոլսահայ բարբառի» (1941), «Քննություն Վանի բարբառի» (1952), է. Աղայանի «Մեղրու բարբառը» (1954), Ս. Անթոսյանի «Կեսարիայի բարբառը» (1962), Մ. Ասատրյանի «Ուրմիայի (Խոյի) բարբառը» (1962), «Լոռու խոսվածքը» (1968), Ս. Բաղդասարյանի «Մշո բարբառը» (1958), Ռ. Բաղրամյանի «Կոզենի բարբառը» (1961), Շա-մախիի բարբառը» (1964), Թ. Դանիելյանի «Մալաթիայի բարբառը» (1967), Կ. Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» (1966), Հ. Մկրտչյանի «Կարնո բարբառը» (1953), Ն. Մկրտչյանի «Բուրբուրի բարբառը» (1971), Հ. Մուրադյանի «Կաքավաբերդի բարբառը» (1967), «Կարճեվանի բարբառը» (1960), Մ. Մուրադյանի «Շատախի բարբառը» (1962), Վ. Պետրյանի «Սասունի բարբառը» (1954), Ա. Պողոսյանի «Հաղորթի բարբառը» (1965) և այլն:

Այժմ ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում լուրջ աշխատանք է տարվում հայ բարբառների ամբողջական քարտեզի ստեղծման ուղղությամբ:

Հայ բարբառների միահատկանիշ դասակարգումը, սակայն, առաջ է բերել բարբառների տարբերակման, նրանց սահմանների ոչ հստակ որոշման դժվարություններ: Տարբեր ուսումնասիրողներ նույն բարբառային վիճակը մերթ իբրև առանձին բարբառ, մերթ ենթաբարբառ և մերթ խոսվածք են ներկայացնում, Անշուշտ սրա պատճառներից մեկը հայ բարբառների փոխներթափանցուններն են, սակայն կարևոր պատճառ է նաև բարբառի առանձնացման գիտական հստակ տեղումնների պակասը:

Հայ բարբառների դասակարգման սկզբունքների ճշտման, բարբառային միավորների փոխհարաբերության ճշգրիտ չափանիշների որոշման գործին նպաստելու նպատակով Գ. Զահուկյանը մշակել է բարբառների բաղմահատկանիշ դասակարգման իր սկզբունքները, որոնք շարադրված են նրա «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ (1972): Որպես բարբառների դասակարգման հիմք հեղինակն ընտրել է լեզվական 100 (հնչյունական 50, քերականական 50) հատկանիշներ և դրանք ուսումնասիրել 120 բարբառային տարբեր միջավայրերում:

Բաղմահատկանիշ դասակարգումը հանգեցնում է բարբառների սահմանների նոր մեկնաբանության, և Գ. Զահուկյանը առաջ է քաշում այնպիսի հասկացություններ, ինչպես բարբառների խմբակցություն, բարբառախմբեր, միջբարբառախմբեր՝ դրանց ներսում տեղադրելով բարբառներն ու խոսվածքները:

Վիճակագրական բարբառագիտության, ինչպես և համաժամանակյա և տարածամասնակյա բարբառագիտության դրույթների առաջքաշումն ու հիմնավորումը նոր խոսք է հայագիտության մեջ:

Սովետական իշխանության տարիներին աննախընթաց զարգացում ապրեց պետականություն ստացած հայ ժողովրդի լեզվի բառային կազմը: Այդ նվաճումներն արտահայտվեցին բաղմաթիվ բառարանների ստեղծումով: Հայ բառարանագրությունը, որն ունի բաղմադարյան պատմություն, առաջին տարիներին հարստացավ մի շարք երկլեզվյան այնպիսի բառարաններով, որոնց կարիքն զգում էին օրեցօր զարգացող ժողովրդական տնտեսությունը, գիտությունը և մշակույթը: Լույս տեսան ռուս-հայերեն մի քանի տամյակ բառարաններ (բժշկական, շինարարական, տեխնիկական, ռազմական, երկաթուղային, իրավաբանական և այլն): Ռուս-հայերեն բառարաններից առանձնապես աչքի են ընկնում 1933—1935 թթ. հրատարակված «Ռուս-հայերեն» քառահատոր բառարանը (1954—1958), Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն քառարանը» (1968), Ստեղծվել են երկլեզվյան, երեքլեզվյան և բաղմալեզվյան տերմինաբանական բառարաններ, ինչպես Մ. Աբեղյանի, Լ. Հովհաննիսյանի, Ա. Տեր-Պողոսյանի «Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարանը» (1951), Վ. Արծրունու «Ռուսերեն-լատիներեն-հայերեն բժշկագիտական տերմինների բառարանը» (1956), Թ. Ավդալբեկյանի «Ռուս-հայերեն տնտեսագիտական տերմինների բառարանը» (1964), Ռ. Աբրահամյանի «Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն» բառարանը (1965), Ա. և Վ. Տոնյանների մաթեմատիկական տերմինների հինգլեզվյան բառարանը (1965) և այլն:

Նոր տերմինների ստեղծման, օտարազգի բառերի տառադարձության, ուղղագրության և ուղղախոսական կանոնների մշակման ու կատարելագործման նպատակով 1933 թ. կազմակերպվեց տերմինաբանական կոմիտե (սկզբում Կենտգործկոմին, ապա լուսավորության մինիստրությանը, իսկ այժմ Մինիստր-

ների սովետին առընթեր)։ Հրատարակվել են կոմիտեի որոշումների երկու ուղեցույցներ (1945 և 1964 թթ.)։ Տերմինաբանական բառարանագրությանը զարկ տալու նպատակով 1970 թ. ՀՍՍՀ ԳԱ նախագահությանը կից կազմվեց գիտատեխնիկական տերմինաբանության խորհուրդ (ակադեմիկոս Գ. Սևակի նախագահությամբ), որը ստեղծել է տասնյակ տերմինարաններ (անտիպ)։ Հիմնադրվել է առանձին հեղինակների ստեղծագործությունների բառարանա-յորությունը, ստեղծվել են ուղղագրական և այլ կարգի բազմաթիվ բառարաններ։ Շատ արդյունավետ է ՀՍՍՀ ԳԱ նախագահության հիմնականում գրադարանին կից քարտարանի գործունեությունը (ակադեմիկոս Ա. Ղարիբյանի գլխավորությամբ)։ Քարտագրվել են հին և նոր մատենագրության գլուխգործոցները, և դրանց հիման վրա կազմվում են համաբարբառներ։ Տպագրվել են Եզնիկի, Կորյունի, Ղ. Փարպեցու, Եղիշեի, Մ. Խորենացու երկերի բնագրային և բառաքերականական համաբարբառները։ Սովետահայ բառարանագրության թագն ու պսակն են կազմում Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» (1926—1935), «Անձնանունների բառարանը» (1942—1962), Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը» (1944—1945)։ ՀՍՍՀ ԳԱ լեզվի-ինստիտուտը հրատարակել է «Ժամանակակից հայերենի բացատրական բառարանի» 1-ին և 2-րդ հատորները (1969, 1972), շուտով կհրատարակվեն նաև մյուսները։ 1967 թ. լույս տեսավ Ա. Մուքիասյանի «Հոմանիշների բառարանը»։ Հիմնադրվել է նաև հայ բառարանագիտությունը։ Հրապարակի վրա է Գ. Գաապարյանի «Հայ բառարանագրության պատմություն» (1968) աշխատությունը։

Սովետահայ լեզվաբանության նվաճումներից մեկն էլ լեզվաբանական մտքի պատմությանը նվիրված աշխատությունների ստեղծումն է։ Այս ուղղությանը լուրջ աշխատանք են կատարել էդ. Աղայանը և Գ. Զահուկյանը։ 1958—1962 թթ. լույս տեսավ էդ. Աղայանի «Հայ լեզվաբանության պատմություն» երկհատոր աշխատությունը։ Հեղինակը շարադրել է հայերենի ուսումնասիրության ասպարեզում եղած տեսությունները հնագույն շրջանից մինչև մեր օրերը։ Նյութի ընդգրկման, սխտեմավորված քննության լավագույն օրինակ է Գ. Զահուկյանի «Լեզվաբանության պատմություն» (1960—1962), երկհատոր մեծածավալ աշխատությունը, որն ամփոփում է մարդկային լեզվի գիտության պատմությունը։

Հայ լեզվաբանական մտքի պատմությանը նվիրված լավագույն աշխատություններից են նաև Գ. Զահուկյանի «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» (1954), Լ. Խաչերյանի «Գործության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում» (1963), Ա. Մուրադյանի «Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում» (1971)։

Այսպիսով, սովետահայ լեզվաբանության նվաճումներն առավել քան ակնհայտ են։ ՍՍՀՄ ժողովուրդների համերաշխ ընտանիքում մեր ժողովուրդը զարգացման բարձր աստիճանի է հասցրել անցյալի ավանդույթներով հարուստ հայագիտության բնագավառներից մեկը ևս՝ լեզվաբանությունը։

СОВЕТСКОЕ АРМЯНСКОЕ ЯЗЫКОЗНАНИЕ ЗА 50 ЛЕТ

В. А. КОСЯН

Доктор филологических наук

Резюме

Возникновение и развитие советского армянского языкознания связано с именами крупнейших лингвистов Р. Ачаряна, М. Абега, С. Малхасяна, Г. Капанцяна. Ими проложены основные пути развития различных отраслей армянского советского языкознания. На основе их фундаментальных трудов стало возможным появление крупных исследований представителей среднего и нового поколений языковедов-арменистов по истории и грамматическому строю армянского языка.

Советскими армянскими лингвистами разработаны вопросы истории армянского языка, достигнуты значительные успехи в области армянской диалектологии, создано научное описание почти всех диалектов и многих говоров армянского языка. Следует отметить появление русско-армянских, толковых, терминологических и других словарей.

В разработке теории современного армянского языка большую работу проделали Г. Севак, А. Гарибян, Э. Агаян, Г. Джаукян, А. Абрамян, В. Аракелян, С. Абрамян и др.